

ՓՈՔՐՈՅԻ ԶՊԷՏՔ Է ԼԻՆԵԼ

(Թարգմանություն)

Ինչպէս կրակն ու ջուրը, այնպէս էլ բարին ու չարը
իրար հակառակ են: Մէկն աշխատում է ոչնչացնել միւսին: Բարին աշխատում է խելամուտ անել մարդկանց անաչառ
ու սրտալի խօսքով, ջերմ կոչով դէպի Աստուծոյ արդա-
րութիւնը, դարձեցնում է մարդու մէջ քնած խիղճը,
ամրացնում նրա թոյլ կամքը, իշխանաբար ձգում-տանում
իւր յետեւից: Զարը, ընդհակառակն, աշխատում է խեղ-
դել ամեն մի բարի ձգտում՝ ու նախաձեռնութիւն, լու-
րաքանչիւր բարի միտք, նա միջոցների մէջ ոչ մի խտրութիւն
չի դնում. որտեղ հնարաւոր է ուղղակի բռնութիւն է գործ
դնում, որտեղ ուժով չի կարելի գործել, դիմում է խո-
րամանկութեան, շողորքութեան, խաբէութեան. ծայ-
րայեղ դէպքում՝ բաւականանում է կեղտոտ բաժրասան-
քով, վատթար զրպարտութեամբ, վիրաւորիչ կատակով ու
չարամիտ ծաղրով: Յիշեցէք Աւետարանը: Դեռ նոր էր
ծնունդ Բեթղեհէմում աշխարհին խոստացուած Փրկիչն ու
նրա հետ աշխարհ եկել Աստուծոյ արդարութիւնը, երբ
չարն արդէն փորձում է հէնց օրօրոցում ոչնչացնել նրան:
Հերովդէսը կոտորել է տալիս հաղարաւոր մանուկներ, որ-
պէս զի նրանց հետ միասին մեռցնի նաեւ մանուկ Յի-
սուսին:

Անցնում է երեսուն տարի: Քրիստոս անապատում
ողհնքով ու ազօթքով պատրաստում է մարդկանց փրո-
կութեան գործի համար, չարի ոգին այլ և այլ փորձու-
թիւններով, գայթակղութիւններով, շողորքութեամբ ու
նենգութեամբ աշխատում է նրան յետ կանգնեցնել մարդ-
կանց դէպի նոր, բարի ու մաքուր կեանք հրաւիրելու
գործից: Յիսուս դուրս է գալիս քաղոքելու, աստուածա-
յին սիրոյ խօսքերով իւր շուրջն է հաւաքում անհամար

բաղմութիւն, մտքբում է մեղաւորների ու մաքաւորների սրտերը. Նրա միայ ծիծաղում են, Նրան բեհեզներուզ են անուանում (Մատթ. ԺԲ, 24). չեն ուզում Նրան հրէայ անուանել. ասում են, որ Նա սամարացի է, ընտրեալ ժողովրդից մերժուած, որ Նրա մէջ գէ կայ: Ահա այսպէս փշոտ է արդարութեան, բարւոյ և սիրոյ ճանապարհը նաև այն բոլորի համար, որոնք այդ գործին են ծառայում: Այդպէս է եղել, է և կը լինի միշտ: Փրկիչն ասում է իւր աշակերտներին. «Այսպէս հալածեցին մարգարէներին, որոնք ձեզնից առաջ էին, այսպէս հալածում են և ինձ, այսպէս կը հալածեն և ձեզ»:

Մարդկանց կեանքի ճանապարհը ծածկուել է խիտ և խայթող փշերով. մարդկոյին անարդարութիւնը, անօրէնութիւնն ու ամեն տեսակ անբարոյականութիւնները, անանցանելի անտառի պէս, խափանում են դէպի Աստուած, դէպի Նրա սէրն ու ճշմարտութիւնը տանող ճանապարհը: Պէտք է, որ մէկը այդ խիտ անտառի միջով ճանապարհ բաց անէ դէպի Աստուծոյ արդարութիւնը և խոցոտող փշերը մաքրէ, իսկ առանց աշխատանքի ու ներդրութեան այդ անհնար է անել: «Աստուծոյ արքայութիւնը ուժով է վերցւում և միմիայն ուժ գործ գնողներն են ձեռք բերում այդ» (Մատթ. ԺԱ, 12): Դէպի սարը տանող ճանապարհը միշտ դժուար ու յոգնեցուցիչ է լինում, սակայն դրա փոխարէն ինչպիսի՞ լայն հորիզոն է բացւում մարդու առաջ, ինչպիսի՞ հրաշալի տեսարաններ են ներկայանում մարդու աչքին, ինչպիսի՞ մաքուր ու կազդուրիչ օդ է խաղում վերեւում, ինչպէս ազտաւ ու հեշտ է շնչում մարդու կուրծքը:

Ամօթ է ու յանցանք վախենալ դէպի Աստուծոյ արդարութիւնը տանող ճանապարհի հետ կապուած դժուարութիւններից ու նեղութիւններից: Ո՛րքան ջանք ենք գործ գնում մեր և մեր որդոց արտաքին կեցութիւնը բարեւ լաւելու համար: Առեւտրի ու վաստակի համար մարդիկ տասնեակ օրերով ճանապարհ են գնում անջրդի անապատներով, փոթորկալից ձովերով, դժուարանցանելի լեռ-

ներով: Օրական հաց ձեռք բերելու համար մարդիկ խորասուզւում են ովկիանոսի յատակը մարդարիտ գտնելու, խլուրդների նման գետնի տակն են մտնում այլևայլ մետաղներ ու քարածուխ հանելու համար: Միթէ Աստուծոյ արդարութեան ոսկին և Քրիստոսի սիրոյ մարդարիտը արժանի չեն նման աշխատանքի: Որդոց համար սիրոյ, բարւոյ ու արդարութեան ժառանգութիւնից աւելի թանկագին ժառանգութիւն չկայ: Եթէ մենք իսկապէս ցանկանում ենք մեր և մեր մերձաւորների կեցութիւնը բարելաւել, ամենից առաջ պէտք է աշխատենք նուիրել մեր ուժերը բարի, արդար ու եղբայրական սիրով ի կեանք ստեղծելու: Աւետարանում ասուած է. «Փնտռեցէք նախ Աստուծոյ արքայութիւնն ու նրա արդարութիւնը և մնացած բաները կը տրուի ձեզ» (Մատթ. 2, 33):

Անիրաւացի կը լինէր պնդել, որ մարդիկ չեն փնտռում Աստուծոյ արքայութիւնը, չեն ձգտում դէպի բարին, խուսափում են Աւետարանի սիրուց, զրպարտութիւն կը լինէր ասել, թէ Քրիստոսի գործի համար աշխատող, իրենց ուժերը երկրի վրայ Աստուծոյ արքայութեան հաստատման գործին նուիրող մշակներ չկան: Թէպէտ այժմ էլ դեռ Աւետարանի խօսքերը, «Հունձը շատ է, իսկ մշակները՝ սակաւ» չեն կորցրել իրենց զօրութիւնը, բայց և այնպէս Աստուծոյ արտի համար աշխատող մշակների թիւը հետզհետէ աճում է, Գլխաւոր թերութիւնը մշակների թուի պակասութեան մէջ չէ (Յիսուս քարոզութեան ուղարկեց միմիայն տասներկու առաքեալ, սակայն նրանք ամբողջ աշխարհի կեանքը բարեփոխեցին), այլ հոգու ուժի և դէպի Աստուծոյ գործն ունեցած հաւատի պակասութեան մէջ է:

Երբեմն մենք պատրաստ ենք լինում անձնուիրաբար աշխատելու յանուն Քրիստոսի, առանց շահի ակնկալութեան նուիրում ենք մեր ուժերը, ժամանակն ու աշխատանքը այս կամ այն բարի գործին, բայց դրա հետ միասին սպասում ենք, որ մեր գործերն ու մենք ընդհանուր համակրանքի ու քաջալերութեան արժանանանք: Եւ երբ

մեզ իբր վարձատրութիւն միմիայն փշեայ պսակ են տալիս և ոչ սք չի ուզում մեզ օգնել, այլ ամենքն էլ ծիծաղում են մեր գործի՝ իբրև մի դատարկ ու անօգուտ բանի՝ վրայ, մենք ընկճում ենք հոգով, մեր ձեռքերը թուլանում են և այլ ևս չենք ուզում մեր գործը առաջ տանել։ Այդ մի ամօթալի ու յանցաւոր փոքրոգութիւն է։ Մենք մոռանում ենք Յիսուս Քրիստոսի, առաքեալների, քրիստոնեայ մարտիրոսների ու նահատակների օրինակը։ Յիսուսի դէմ էին Հերովդէս թագաւորը, ծերակոյտը, բոլոր դպիրներն ու փարիսեցիները՝ ժողովրդի առաջնորդներն և ուսուցիչները։ Նրան չէին ընդունում նոյն իսկ Իւր մօտիկ ազգականները, նրան չէին հասկանում շատ բաներում նոյն իսկ Իւր հետ շրջող աշակերտները։ Այն ժողովուրդը, որի համար նա այնքան ցաւում էր ի սրտէ և որին այնքան բարիքներ էր անում, աւազակ Բարաբբային գերադասում է նրանից, և չնայելով այդ բոլորին Փրկիչը երբէք մի քայլ անգամ չի շեղում Իւր գործից։ Նա աւսում էր, «ես պէտք է կատարեմ ինձ Ուղարկողի գործը» (Յով. Թ, 4), իսկ թէ ուրիշներն ինչ կանեն, ինչպէս կը վերաբերուեն Աստուծոյ գործին, դրա համար իրենք պէտք է հաշիւ տան Աստուծուն, այդ նրանց խղճի գործն է։ Նոյնը Փրկիչ պատուիրում է և մեզ, «Ի՞նչ գիտես, որ մարդկանց ամենից առաջ և ամենից աւելի Աստուծոյ ճշմարտութիւնն է պէտք, ուրմն և ցանիւր այդ սերմերը քո շուրջը, բարիք գործիր, որքան կարող ես և որքան ներում են ուժերդ, այդ քո պարտականութիւնն է»։

Իսկական բժշկի համար միևնոյն է, հիւանդը ուզում է դեղ ընդունել, թէ ոչ, գովում է նրան, թէ հայհոյում, նա երբէք չի թողնում հիւանդին և միմիայն այն է մտածում, թէ ինչպէս օգնի, առողջացնի ու ոտքի կանգնեցնի նրան։ Քո թոյլ եղբայրների հոգու համար այդպիսի բժշկ եղիր։

Երբ մենք ուզում ենք ճաշել, ուշագրութիւն չենք դարձնում, թէ ուրիշները հաւանում են մեր արածը, թէ պախարակում, մեր քաղցը յագեցնելու համար մենք կա-

րիք չենք զգուժում ներկայ եղողների հաւանութեանը: Նոյնը պէտք է լինի նաև Աստուծոյ գործի համար մեր ունեցած աշխատանքի նկատմամբ: Յիսուս ասում էր Իւր աշակերտներին. «Իմ կերակուրն այն է, որ Ինձ Ուղարկողի կամքն ու Նրա գործը կատարեմ» (Յով. Դ, 34): Այդ կերակրից երբէք մի զրկիր քեզ, մի խորշիր նրանից այն պատճառով, որ այդ ուրիշներին դուր չի գալիս: Այդ կերակուրը՝ Աստուծոյ կամքը յաւիտենական կեանքի գլխաւոր ազդիւրն է: Քանի դեռ մարդիկ այդ կերակրի համը չեն առել, չեն էլ կաբող ըստ արժանւոյն դնահատել. նրանք, փոքր երեխաների պէս, առողջարար ու սննդարար կերակրի փոխարէն փնասակար ու վատառողջ քաղցրեղէններն են ընտրում: Եթէ դու փոքրոգութեամբ խորշես առողջարար կերակրից, ով պէտք է սովորեցնի նրանց սնուելու այն միակ կերակրով, որ արդարև իսկական սնունդ է տալիս:

Նախկին քրիստոնեաների վրայ ծիծաղում էին, նրանց անմիտ էին համարում, աշխատում էին բանաով, տանջանքով ու մահուան պատժով յետ դարձնել նրանց իրենց նոր հաւատից, սակայն քրիստոնեաները հաստատ էին մընում իրենց հաւատին, կեանքի վրայ ունեցած իրենց հայեացքին և հաւատի համար կրած տանջանքներով նոյն իսկ թշնամիների մէջ յարգանք էին ներշնչում դէպի քրիստոնէութիւնը:

«Նշանակում է քրիստոնէութիւնը մի դատարկ սնապաշատութիւն չէ, մտածում էին հեթանոսները, երբ նրա համար մարդիկ այնպէս տիրով զոհում են իրենց կեանքը, նշանակում է նրա մէջ մի բան կայ, որ կարող է մարդկանց համար կեանքից էլ աւելի թանգ լինել և այդպիսով քրիստոնեաների հոգու արիութիւնը հեթանոսներին մեծ յարգանք էր ներշնչում դէպի Յիսուսի վարդապետութիւնը»:

Միմիայն այն ժամանակ կարելի է ուրիշներին ստիպել ամենից բարձր դնահատելու Աստուծոյ գործը, երբ նախ դու ինքդ ես այդ ամենից վեր դասում և գործով ու կեանքով նոյնը հաստատում:

Ձախտք է երբէք փոքրոգի լինել: Քրիստոսի գործի յաջողութիւնը նրա համար աշխատող մշակի բարոյական ուժի մէջ է: Այդտեղ հոգու արիութիւն է պէտք, ջերմ սէր դէպի թշուառ եղբայրները, խոր համոզում ու հաստատուն հաւատ, որ լոյսը պիտի յաղթի խուսարիւն, որ արդարութիւնը պիտի յաղթի անիրաւութեան: Յոյց տուր աւելի հաւատ դէպի բարու յաղթանակը, աւելի արիութիւն արդար գործի կռուի մէջ, աւելի քաջութիւն չարի յարձակումները ու ոտնձգութիւնները դէմ:

Մամբրէ վարդապետ.

Մ Ա Յ Ր Ա Ռ Ո Ռ

Դեկտեմբերի երկուսին Ազգիս Վեհափառ Հայրապետը ներդուելով ոտքի հիւանդութիւնից, օգտփոխութեան նպատակաւ ուղևորուեց Աղէքսանդրապօլ այնտեղից Թիֆլիզ գնալու մտադրութեամբ: Մայր Աթոռից մինչև Էջմիածին կայարանը նորին Սրբութեան ուղեկցում էին լուսարարապետ Դևոնդ եպիսկոպոսը, վանական կառավարութեան նախագահ Եղիշէ ծ. վարդապետ Մուրադեանը և Սինօգի անդամ Մատթէոս վարդապետ Մատթէոսեանը. իսկ մինչև Աղէքսանդրապօլ — Կիւրեղ վարդապետ Կիւրեղեանը և պ. Խօրէն Խրիմեանը:

Որովհետև Զուարթնոց եկեղեցու աւերակների շրջակայքում դռնուեցին զանազան շինութիւնների բազմաթիւ յետքեր, ուստի Մայր Աթոռիս միաբան տէր Մեսրոպ վարդապետ Տէր Մովսիսեանը զիմեց Կայսերական Հնագիտական Ընկերութեան օրինաւոր թոյլտւութիւն ստանալու յիշեալ տեղում պեղումներ կատարելու: Թոյլտւու-